

մասին 400 էջանոց աշխատությունը, հնագետ և բանասեր պրոֆ. Գր. Ավագյանի «Սասունցի Գավիթ» էպոսի ուսմիներեն թարգմանությունը, Ս. Գազանյանի արևելյան գորգերի մասին աշխատությունը, պատրաստվում է նաև պատմական մի երկ՝ նվիրված թրքական լծի դեմ ուղղված հայ ժողովրդի ազատագրական շարժմանը և ուսուսողների կողմից նրան ցույց տրված օգնությունը: Բաժանմունքի անդամ Հ. Ճ. Սիրունին պրոֆ. Յոնաշկուի գործակցությամբ աշխատում է չորս հատորանոց մենագրության վրա, որը պատկերելու է մեծ դիվանագետ, ուսուսանող Մանուկ բեյ Միրզայանի կյանքն ու գործունեությունը: Արգի հայերեն լեզուն ուսումնասիրող խմբակից Հ. Ճ. Սիրունին պատրաս-

տում է հայերեն աշխարհարարի բերականությունը, պատրաստվում են նաև ուսմիներեն-հայերեն և հայերեն-ուսմիներեն բառարաններ և այլն:

«Studia et Acta Orientalia» հանդեսի առաջին համարի լույս ընծայումը ուսմիների արևելագետների մեծ հաջողությունն է: Ողջունելի է հատկապես բաժանմունքի նախագահ հայագետ պրոֆ. Վլադ Բընբընյանուի աննկուն և օգտաշատ գործունեությունը:

Մենք ի սրան նորանոր հաջողություններ ենք ցանկանում անխոնջ աշխատող հարգելի հայագետին և հանդեսի բոլոր աշխատակիցներին:

Ս. ՔՈՒԱՆՋՅԱՆ

ԱԲ. ՄՈՎՍԻՍՅԱՆ, Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության, Հայպետուսմանկհրատ, Երևան, 1957 թ.:

Վերջերս լույս է տեսել Արգար Մովսիսյանի «Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության» ծավալուն աշխատությունը: Հիշյալ գիրքը գիտական հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն որպես հալ հին դպրոցի ու մանկավարժության պատմության մարտիստական շարադրանքի առաջին արտահայտություն, այլև իբրև մի գործ, որը դուրս է գալիս զուտ մանկավարժության շրջանակներից և լուսարանում է հայ ժողովրդի կյանքի և կուլտուրայի պատմությունն ընդհանրապես: Իրոք, «Ուրվագծեր» աճադին նյութ են տալիս և՛ պատմաբաններին, և՛ գրականագետներին իրենց բնագավառներին վերաբերող մի շարք երևույթներ ավելի հիմնավոր կերպով բացատրելու և գնահատելու իմաստով:

Ա. Մովսիսյանի «Ուրվագծեր» հիմնականում բաղկացած է երկու մեծ բաժիններից: Առաջին բաժինը նվիրված է դպրոցի և դպրոցական գործիչների պատմությանը, իսկ երկրորդ բաժինը՝ ուսումնական գործի կազմակերպման մանկավարժական սկզբունքներին և առհասարակ հայ մանկավարժական մտքին ու դաստիարակության տեսությունը:

Գրքի հեղինակը տարիների ընթացքում կատարել է բանասիրական-հետազոտական մեծ աշխատանք: Նա բարեխղճորեն և մանրակրկիտ կերպով ուսումնասիրել է նյութին վերաբերող բազմաթիվ տպագիր և ձեռագիր աղբյուրներ:

Ա. Մովսիսյանը մի համառոտ ակնարկով ամփոփելով հայ դպրոցի և կրթության պատմությունը մինչև X դարը, անցնում է իր վերջրած ժամանակաշրջանի՝ X—XV դարերի

բաղադրական-սոցիալական կյանքի բնութագրմանը, հատկապես X դարից հալ կյանքում ստեղծված այն իրադրության վերլուծմանը, որը հենց պայմանավորել է հայ դպրոցի ու մանկավարժության աննախնայաց զարգացումը: Խոսելով զարգացման այդ կտակ մասին, հեղինակը գրում է. «Բարատունյաց թագավորությունում խոշոր դպրոցներ հաստատվեցին Հաղբատում, Սանահունում, Գիտիկում, Հաղարծինում, Բաղարանում, Գլինում, Արագածոտնում, էջմիածնում, Երազավորում, Անիում, Կիչառիսում, Բջնիում, Հավուց-Թառում և այլն. որոնք դարձան մտավոր, հոգևոր կենտրոններ: Արժույթի հիմնեցին Վանի, Ոստանի, Աղթամարի, Վարազի դպրոցները: Այլուհրում հաստատվեցին Շաղաթի, Մաքինոցայ վանքի, Տաթևի, Որոտնա, Ապրակունյաց, Երնջակի, Սևանի, Թանահաթի, Հերմոնի, Խոտակերաց, Այրիվանքի և Գլաձորի խոշոր դպրոցներն ու հոգևոր կենտրոնները» (էջ 63): Այս հարուստ թվարկմամբ, որով անշուշտ դեռ չի սպառվում իրողությունը, հիշատակված նշանավոր դպրոցների մեծ մասը հիմնադրվել են X դարում: Պատմականության ճիշտ գագացումը և վաստերի խոր ուսումնասիրությունը բնականաբար հեղինակին ոգեշնչել են նախ և առաջ շարադրելու X—XV դարերի հայ դպրոցի ու մանկավարժության պատմությունը, որովհետև իսկապես միջնադարի մեր հասարակական կյանքի այդ շրջանը ամենահարուստ նյութ է տալիս դրա համար:

Գպրոցական գործի և մանկավարժական մտքի զարգացման մի նոր և նշանավոր ժամանակաշրջանի՝ X դարից սկսվելու հավաստումը

18*

նես քերթող, Մաթուսաղա քերթող, Մովսես քերթող, Սահփանոս Սյունեցի և ուրիշներ), գործունեության մեջ իբրև պատմականորեն դրական և առաջավոր գիծ ճիշտ կերպով նշվում է հայ ժողովրդի ազատագրական կռիվ արտահայտության՝ քաղկեդոնականության դեմ նրանց մղած պայքարը, մի պայքար, որը հարատևում է նաև հետագա դարերում՝ իվերջո ուղղվելով պապականության և կաթոլիկության բարոզչության դեմ: Այնուհետև հեղինակը արդեն մանրամասնորեն անդրադառնում է Տաթևի բարձր տիպի դպրոցին ու նրա պանծալի ղեկավարներին: Խոսելով Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու և մյուսների մասին, հանգամանորեն շարադրում է նրանց աշխատությունների և դպրոցական գործում կատարած նորամուծությունների արժեքն ու նշանակությունը հայ մանկավարժական մտքի զարգացման պատմության մեջ: Սրանց օրով Տաթևի համալսարանում առանձին բարձրության է հասնում հին հունական փիլիսոփայության դասախոսությունները, փիլիսոփաների գործերի ուսումնասիրությունն ու մեկնաբանությունները: Ուսման ծրագրերում կարևոր տեղ են բռնում նաև բնական գիտությունները, մանկավանդ քիմիան-տարրաբանությունը, մաթեմատիկան և մարդակազմությունը: Գրիգոր Տաթևացին ուսուցման մեթոդների վերաբերյալ է փիլիսոփայական այն սկզբունքը, որ «մտածողությունը առանց հենվելու իրականության վրա ճշմարիտ լինել չի կարող» (Լջ 147):

Տաթևի համալսարանից հետո «Ուրվագծում» նկարագրվում և գնահատվում է Գլաձորի բարձր տիպի դպրոցը, որը իր ժամանակին «երկրորդ Աթենք» է տնօրնակել: Բավական մանրամասն գրքի հեղինակը անդրադառնում է նրա շնչուն՝ մանկավարժության բնագավառում բերած նորություններին, նրա «Կրթություն տեսական և գործնական իմաստից» գրքին և այսպես հաջորդաբար ներկայացվում են վերցված ժամանակաշրջանի մոտ հիսունի հասնող դպրոցներն ու նրանց հետ կապված հայտնի անձնավորությունների պորտրետները: Եվ այդ բոլորը, այդ ահագին փաստական նյութը հաջող կերպով լուսաբանված և գնահատված է հեղինակի կողմից: Առանձնապես հետաքրքրական են հուշակալոր Հովհաննես Սարկավազ Իմաստասերի և նրա գլխավորած Հաղբատի և Անիի դպրոցների մասին գրքում եղած գիտողությունները:

Բազմակողմանի զարգացման տեր գիտնական, փիլիսոփա և գրող Հովհաննես Իմաստասերի մանկավարժական գործունեության հիմ-

քում ընկած է ժամանակի համար մեծ նորություն հանդիսացող նրա տեսությունը փորձի նշանակության մասին, որը հանդում է հետևյալին. «1. Առանց փորձի կարծիքներն ու տեսակետները անհավատալի են, որովհետև փորձն է հաստատուն, որ հիմնված է իրական փաստերի վրա և աներկբա է: 2. Չպետք է միայն հնագիտակ լինել, կառչել միայն հին գիտելիքներին ու մեթոդներին և հավատալ նրանց ու փորձով չստուգել: 3. Հարստացնել իմացությունը նոր գիտելիքներով ու փորձով, գիտենալ գործադրել միջոցներ զարգացնելու կարողություններն ու շնորհքը, ուսումնասիրել ու հասնել ճշմարտությունների և այդպես էլ ուսուցանել ուրիշներին» (Լջ 238): Այսպիսի առաջավոր գաղափարներով Իմաստասերը, անշուշտ, դուրս է գալիս միջնադարի կղերական կաշկանդող սխոլաստիկայի շրջանակներից:

Ա. Մովսիսյանի ուսումնասիրության մեջ բացի ժամանակագրական կարգով տրված դպրոցների պատմությունից, շոշափվում են նաև դրա հետ առնչվող բազմաթիվ այլ հարցեր: Այսպես՝ գիտության համար շատ կարևոր են միջնադարում ընդունված զանազան տիպի դպրոցների անունների (դպրոց, դպրատուն, ճեմարան, համալսարան, բարոնարան և այլն) ու նրանց մանկավարժական կազմի կոչումների (ուսուցիչ, վարդապետ, դպրապետ, դաստառ և այլն) համբերատար ստուգաբանումները և բացատրությունները: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում գրքի՝ աշակերտների վարագոյի և նրանց ֆիզիկական դաստիարակության վերաբերող գլուխները:

Ընդունված կարգով թերևս անհրաժեշտ էր խոսել նաև գրքի թերությունների մասին, բայց մենք դրանց շենք անդրադառնում, որովհետև դրանք բնավ էական չեն (տեղ-տեղ որոշ կրկնություններ, կամ շարագրանքի մեջ որոշ երկարաբանություններ, որոշ անճշտություններ այս կամ այն մանկավարժի աշխատակազմի բնութագրման մեջ, մասամբ ժլատ տեղեկություններ Կիլիկիայի հայտնի դպրոցների մասին և այլն):

Ամեն տեսակետից խրատունի է Ա. Մովսիսյանի իրագործած աշխատանքը: Մեր ընթերցող հասարակացությունը հաստատապես ցանկանում է, որ նա ավարտի և տպագրված հանձնի իր վերջրած ժամանակաշրջանին նախորդող, ինչպես և հետագա դարերի հայ դպրոցի և մանկավարժական մտքի պատմությունը:

Մ. ՄԿՐՅԱՆ: